

**ԲՆԱԳՐԵՐ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ
TEXTES ET ETUDES**

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՈՂ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՀԱՅ – ՌՈՒՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԱՐՏԱՑՈՒՄԸ ՆՐԱՆՈՒՄ*

Հայոց վերանորոգութեան շարժումը, որ նոր կերպարանք է առնում ԺԸ. դարի հասարակական-քաղաքական եւ մշակութային վեճանքի համատեղ զարգացմամբ, ներգործում է նաեւ գեղարվեստական գրականութեան վրայ: Գրական երկն, իր հերթին, վերափոխւում է: Վերափոխութիւնը կատարւում է եւ գեղարվեստական, եւ գաղափարական առումներով: Դարի հոգեւոր ու աշխարհիկ առաջաւոր գործիչներն իրենց ստեղծագործութիւններում վերակենդանացնում են հայ հին եւ միջին դարերի գրականութեան ոգու եւ արուեստի լաւագոյն գծերը եւ հետեւելով նաեւ նոր ժամանակների լուսաւորեալ ազգերի մտքի նուաճումներին, զարգացնում են հայ մեր ազգային, կրօնա-ազգային լուսաւորական գրականութեան համար եւս սա վերանորոգութեան կամ անցման շրջան է, հնի եւ նորի համերաշխութեան եւ ներդաշնակութեան, միաժամանակ հնի եւ նորի ներքին պայքարի մի շրջան, որն ամուր հիմքեր է ստեղծում նոր ազգային-դասական գրականութեան լայնահուն զարգացման համար:

ԺԸ. դարի հայ հին եւ նոր գրական շրջանների այս խաչաձեւ զարգացման առաջին արդիւնքը եւրոպական դասականութեան տեսութեան որոշ սկզբունքների ներթափանցումն է հայ գրականութեան մէջ: Փրայդէս հէնց այս շրջանում, մեր գրականութեան դարաւոր պատմութեան մէջ առաջին անգամ, գեղարվեստական գրականութիւնը բաժանւում է տեսականօրէն սահմանաւորուած առանձին տե-

*) Այստեղ մենք սոսկ քննարկում ենք հայ վերանորոգչող գեղարվեստական գրականութեան հիմնական գծերը եւ ներկայացնում՝ հայրուստական յարաբերութիւններ արձագանգող գրական առանձին երկեր: Նշենք նաեւ, որ մեր այս գրական շրջանում համադրաբար շօշափուած այլեւայլ հարցերի մասին մենք նախապէս անդրադարձել ենք առանձնաբար զանազան յօդուածների մէջ:

ուերի եւ նրանց զարգացումը դրուում է կանոնական, ծրագրային հիմքերի վրայ: Դա դրական երկի արուեստի արտաքին, ընդհանուր փոխակերպությունն է: Իրենց քննորոշ առանձնատկություններով եւ ընդհանրություններով, ինքնուրույն, անջատ զարգացման մար ուղի եմ մտնում՝ գեղարուեստական արձակը, բանաստեղծությունը եւ թատերադրությունը — դրաման: Ստեղծում են՝ բանաստեղծություն, վիպասանություն, թատերադրություն, դրական երկի արուեստի ու բովանդակության, կառուցումաձևի, կերպարների, լեզուի եւ ոճի, արտայայտչական եղանակների, երաժշտականության վերաբերեալ չափածոյ եւ արձակ կանոնական երկեր, մշակում են տեսական օրէնքներ, հիմունքներ, բանաձևեր, երկասիրություններ (Խ. Էդդուամեցի՝ «Համառոտական իմաստասիրություն կամ Բովանդակություն ամենայն ուսմանը», Մ. Սեբաստացի՝ «Համառոտական ճարտասանություն», «Յաղագս մաթեմատիկայի», Ս. Սյունց՝ «Ճարտասանություն բովանդակեալ ի հինգ գիրս», Պ. Կաղզուանցի՝ «Բան առ ընթերցողսն, եւ այլն»):

Հայոց գեղարուեստական գրականությունը ԺԸ. դարում, հաւատարիմ՝ հիների գեղագիտական աւանդներին, իր նախնական քայլերն է անում թեւակոխելու հին (անտիկ) աշխարհից սկիզբ առած, կանոնական հիմքերի վրայ դրուած գրական սեռերի զարգացման նոր, եւրոպական ճանապարհը:

Այս նոր ճանապարհի վրայ գրական երկը, սուսեւ քան ձեւով, արուեստով, փոխակերպւում է ներքնապէս, տաղափարական բովանդակութեամբ, նիւթով: Դարի գրական շարժման առաջադէմ ներկայացուցիչներն իրենց երկերում դրսեւորում են կենսահայեցողութեան նոր դժեք, փնտռում են կեանքը համեմատաբար լայն ու քննարար վերարտացուելու այլ եղանակներ եւ ուղիներ: Ստեղծւում են դեղարուեստական արձակի նոր նմուշներ: Սոսկ կենցաղային, բարոյախօսական, մեծ մասամբ հրաշապատում գրական զրոյցների, արձակ այլ էջերի կողքին հանդէս են գալիս նաեւ իրական, առարկայական փոխարարներությունների հիմքի վրայ, քաղաքական — ազատասիրական, ուսումնակրթական, դատարարակցական բնոյթի արձակ ըստեղծագործություններ՝ նամականի, անցք եւ պատմություններ, զրոյց, վէպ, վիպասանություն, տեսիլք (Պ. Դպիր, Գ. Կամպանեան, Յ. Նալեան, Գր. Օշականցի, Պ. Կաղզուանցի, Յ. Ա. Բերիացի եւ այլք):

ԺԸ. դարի հայ նոր եւ ընդհանուր վերանորոգություն շարժման ընդերքում է սաղմնաւորւում ու ծնունդ առնում նաեւ նոր դասական թատրոնը: Մի շարք հայադէտ-թատերագէտների (Հ. Բ. Սարգսեան, Հ. Ե. Փէլիկեան, Վ. Թերղիբաշեան, Գ. Գոյեան, Հ. Մ.

Ճանաչեան, Ռ. Ջարեան, Գ. Ստեփանեան, Հ. Լ. Ջէքիեան, Հ. Յովհաննիսեան) ջանքերով, դրաւոր եւ քանաւոր, հին եւ նոր՝ պատմագիտական, արուեստագիտական, հնագիտական, աղբադրական եւ բաղմատեսակ այլ նիւթերի հիման վրայ հիւսուել է հայ թատրոնի երկհազարամեայ պատմությունը՝ ներառեալ ԺԺ. դարը: Յայտնի է, որ հայ թատրոնի (դպրոցական) սկիզբը նշուում է 1660ական թրւականներին Վահաստանի Լվով քաղաքում քեմադրուած «Հռիփսիմէ», «Մահ Կեսարայ», «Առակը Սողոմոնի», «Մահ Հերովդեսայ» երկերի քեմադրություն փաստով: Սակայն, ինչպէս ճիշտ նկատում են նոյն թատերագէտները, այդ նշանակալից պատմական իրողությունը սոսկ մի օղակ է անշղթայ, օտարամուտ մի երեւոյթ, որ ոչ մի հետք չի թողնում հայ թատրոնի պատմություն վրայ: Իրապէս հայ նոր թատերադրությունը, — դրաման՝ իբրեւ գրական սեռ, եւ թատրոնը՝ իբրեւ արուեստի կարեւոր մի ճիւղ —, սկիզբնաւորւում եւ անընդմէջ զարգացման ճանապարհ է հարթում ԺԸ. դարում: Այդ ճանապարհի շինություն պատիւը, ինչպէս յայտնի է, պատկանում է Վենետիկի Միխիթարեան Միաբանություն: Հ. Լ. Ջէքիեանի «Հայ թատրոնի ակըդրնաբարերը...»՝ աշխատությունն նոր փաստերը եւս համոզում են, որ ԺԸ. դարի 30ական թրւականներին ի վեր Միխիթարեանները դրում եւ բեմադրում են թատերական երկեր՝ վկայաբանական, պատմահայրենասիրական, կենցաղային թատերադրություններ, ողբերգություններ. «Խաղ հիւանդին», «Բաղամ եւ Բաղ», Նահատակություն Եր. Տն. Կոմիտասայ, «Խաղ ճգնաւորաց», «Յովսէփ», «Յոք», «Յովսէփ», «Անհաւատ Սառաֆի նենգասիրությունը», «Տէր Փիլոս», «Դաւադործ մահ Խոսրովայ արքային Հայոց յԱնակայ», «Վարդան Մամիկոնեան», «Արեւած Երուանդեան Տիրանայ», եւ այլն²: Բեմադրուած ողբերգությունների եւ դաւադրական թատերադրությունների զանազանություն փաստը համոզում է, որ Միխիթարեան թատրոնը ի սկզբանէ սոսկ կրօնական, դաւանաբանական սահմանափակ ուղղություն չի ունեցել, ինչպէս կարծում են թատերագէտներից ոմանք, այլ հետապնդել է կրօնա-աղային կրթական, դաստիարակչական, հայրենասիրական նպատակներ: Հենրիկ Յովհաննիսեանի «Թատրոնը միջնադարեան Հայաստանում» (Երեւան, 1978) քննական մենագրությունն այն դրոյթը, թէ հայ թատրոնի միջնադարեան ողջ պատմությունը ուղեկցում է ժողովրդական, անգիր, բանաւոր թատերադրությունը, անուղղակիօրէն հաստատում է, որ դրաւոր, դասական թատրոնը հայ նոր եւ ընդհանուր վերանորոգության շարժ-

1. Հ. Լ. Ջէքիեան, Հայ թատրոնի սկզբնաւորները եւ հայ վերածնունդի շարժումը, «Հայագիտական մատենադարան "Բաղմապէս"», 7, Վենետիկ 1975:
2. Անդ, էջ 19-21:

է հայկական դատի պաշտպան Լորդ Բրայը (1916 թվականին Լոնդոնում Շէյքսպիրի ծննդեան 300ամեակին նուիրուած հայկական հանդիսում իր արտասանած ճառում) —, երբ նեղուցներից այն կողմը գրականութիւն գոյութիւն չունէր, գրականութիւնն իր ծաղկած երիտասարդութիւնն էր ապրում Հայաստանում: Բանաստեղծական աւելին երբեք չցամաքեց այնտեղ... Չկայ ուրիշ երկիր եւ այլ ժողովուրդ, որ այնքան շատ ողբերգական եւ յուշիչ նիւթ մատակարարած լինի բանաստեղծութեան համար, որքան Հայաստանը: Նրա պատմութիւնը դարերի ընթացքում եղել է հալածանքի ու վտանգի, անընդհատ դիմադրութեան պատմութիւն»⁴: Իրօք հայ ժողովրդի հալածանքի ու վտանգի, անընդհատ դիմադրութեան պատմութիւնն է ծնել նրա հարուստ բանաստեղծութիւնը: Բնականաբար, ԺԸ. դարում եւս, հայոց կեանքի նոր եւ ընդհանուր վերանորոգութեան այս շրջանում, պէտք է վերստին գործնապէս եւ գործնական, ծրագրային դեր ստանձնէր գրաւոր բանաստեղծութիւնը:

ԺԸ. դարի բանաստեղծութիւնը ողբի եւ սթափումի բանաստեղծութիւն է՝ լայն առումով: Ողբը, յոյսի շաղախով, միջնադարեան հայոց քնարերգութեան իշխող եղանակն է, նրա տրամադրութիւնը: ԺԸ. դարում նկատելիօրէն փոխուած է գրական բանաստեղծութեան այդ եղանակը: Ողբի եւ սթափման երգերի մէջ, աւելի քան, բացորոշում են աղբալին, կրօնա-աղբալին տարրերը, աղբի եւ եկեղեցու միասնութեան խնդիրը, մաքառողական, դիմադրողական, ազատագրական պայքարի ոգին, դասային հակասութիւններն ու հակամարտութիւնները: Մարդու անձնական, ներքին խոհերին, հոգեւոր տրամադրութիւններին՝ սէր, խրախճանք եւ այլն, վերանորոգող դասական գրականութիւնը անդրադառնում է երկրորդաբար: Դրանք առաւելապէս ժողովրդա-աշուղական բանաստեղծութեան հիմնական խնդիրներն են: Թէեւ աղբալէս է, սակայն ԺԸ. դարի գրաւոր բանաստեղծութիւնը, հին եւ նոր՝ պալիք գրականութեան միջին օղակը (կամ անցման շրջանի ծնունդը) չինելով, իր կրօնա-աղբալին գաղափարախօսութեամբ, որը հէնց հայկական դասականութեան գաղափարախօսութիւնն է, միաժամանակ չի սահմանադատում, չի կրտրում ժողովրդային-աշուղական բանաստեղծութիւնից, չի հակադրում նրան, այլ ընդհակառակը՝ համախօս է նրան, օգտուած է նրա ժողովրդաշունչ արուեստից, կիրառում է ժողովրդային-աշուղական երգի հիւսուածքի, առաջադիմութեան ու յանդաւորման ձեւերն ու եղանակներ: Դասական եւ ժողովրդական ստեղծագործութիւնների արուեստի ու բովանդակութեան կենսական գծերի համադրութեամբ է քնորոշ ու առանձնաշատուկ՝ անցման կամ վերանորոգու-

4. «Հորիզոն», 1916, Յունիս 7, թիւ 125:

թեան շրջանի գեղարուեստական գրականութիւնը: Դա հայկական դասականութեան նախնական հանգրուանի իւրաքանչիւրութիւնն է. Մ. Սեբաստացու, Ս. Երէցի, Պ. Դպրի, Պ. Ղափանցու, Յ. Նալեանի, Պ. Նախիջեւանցու, Յ. Բիւղանդացու, Ս. Երեւանցու, Յար. Կարնեցու, Պ. Կաղզուանցու, Թ. Զուղայեցու, Գր. Օշականցու, Մ. Կարնեցու, Յովհ. Կարնեցու, Գր. Կամպանեանի եւ այլոց գրական րատեղծագործութիւնները (տարբեր չափերով) այս երեւոյթի արդիւնք են:

ԺԸ. դարի վերանորոգող չին եւ նոր գրական երեւոյթների խաչաձեւ զարգացման յաջորդ շօշափելի արդիւնքը գիտական, տեսական, ճանաչողական բանաստեղծութեան ուղղաձիգ զարգացումն է: Յայտնի է, որ ամէն մի ժողովրդի աղբալին դարձեւ իր կամ վերանորոգութեան շրջանում, իբրեւ գրական, մշակութային բնականոն երեւոյթ, լուսաւորական գործնական միջոց, զարգանում է նաեւ գիտական, տեսական, ճանաչողական գրականութիւնը: Արդալէս է եղել հին յունական գրականութեան մէջ (Արիստոտէլ, Հենոդոս...), արեւմտեան-երոպական դասականութեան շրջանում (Մալերբ, Բուալոյ...), ռուսական նոր աղբալին գրականութեան զարգացման ժամանակ (Լոմոնոսով, Կարամզին...), աղբալէս է եղել հայ մտաւոր կեանքի վերածննդի շրջանում՝ (Վարդան Հայկազն, Յովհ. Սարկաւազ, Ն. Շնորհալի, Ն. Լամբրոնացի, Գ. Սկեւազի, Յովհ. Երզնկացի եւ այլք), աղբալէս է եւ հայ նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շրջանում՝ ԺԸ. դարում: Հայոց անցած դարերից եկող բարոյակրթական, գիտապատմական-ճանաչողական գրականութեան ընդդրկումները մեծ չափերի են հասնում: Ստեղծում են ճշգրիտ եւ հասարակական բոլոր գիտութիւններին եւ արուեստներին, գրականութեան, նրանց հիմնական եւ երկրորդական ճիւղերին, ենթաճիւղերին նուիրուած արձակ եւ չափածոյ ոտանաւոր երկերը: Հայ իրականութեան համար բոլորովին նորութիւններ էին՝ բնագիտութեան, բնազանցութեան, երկրաչափութեան, թուաբանութեան տնտեսագիտութեան, ինչպէս նաեւ պետութեան, իշխանութիւնների, հասարակական, դատական, քննչական կազմակերպութիւնների կառուցողութիւնը, դերի եւ նշանակութեան, գոյութիւն ունեցող դասերի եւ դասակարգերի, հասարակութեան եւ նրա բոլոր խաւերի, ընտանիքի եւ նրա անդամների իրաւունքների ու պարտականութիւնների, նրանց փոխարարութիւնների վերաբերեալ կանոնական ոտանաւորները եւ այլ գրական երկերը (Պ. Էրզրումեցի, Մ. Սեբաստացի, Յ. Նալեան, Յ. Շահամիրեան, Թ. Զոտայեցի եւ այլք): ԺԸ. դարի հայ գիտական, տեսական, ուսուցողական բանաստեղծութեան շերտերում նկատուած ենք նաեւ այնպիսի նոր բնադաւառներ, ինչպիսիք են քա-

րունակում էր այդ ճամբան. «... Ռուբինեան թագաւորութեան կործանումից յետոյ, — ընդհանրացնում է Մ. Նալբանդեանը —, օրէ օր նա առաւել սաստկանում է տգիտութիւնը, եւս առաւել թանձրանում խաւարը, եւ աղբը համօրէն ընկնում է մի մահանման քնի մէջ: Հայոց աղբը առանց աչք բանալու քնում է միալար, չորս հարիւր տարի, մինչեւ տաանութեորդ դարու սկիզբը»⁸: Իրապէս ԺԸ. դարի սկզբից ի վեր հայ ժողովրդին մահանման քնից վեր հանելու, նրա աղգային մտաւոր, մշակութային պայքարը առաջ մղելու գործում մեծ դեր էին կատարում նաեւ վերակառուցողող հայ եկեղեցիները, կրօնական միաբանութիւններն ու դպրոցները: «Հայկական վերածնունդը, — գրում է Վ. Բրիւսովը, — սերտօրէն կապուած է Մխիթարեան միաբանութեան հետ»⁹: Աղգային եկեղեցին, նրա ղիտութիւնը, բարոյական աստուածաբանութիւնը, եկեղեցական առաջաւոր դրականութիւնն ամբողջութեամբ (իր սահմանափակութեամբ եւ ներքին հակասութիւններով հանդերձ) յարմարեցւում էին հայ նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժման պաղաւտարախօսութեանը: Այլ կերպ ասած, ԺԸ. դարում հայ եկեղեցու, հոգեւորականութեան դերը ոչ թէ նուազում էր, այլ՝ վերափոխւում, մեծանում, թէեւ միաժամանակ ասպարէզ էին դալիս հասարակական նոր խմբեր ու հոսանքներ: Նոյն դարի հայ աղատադրական շարժման գործիչ Յովսէփ Էմինը, խստադոյնս քննադատելով եկեղեցականներին, բացայայտելով նրանց արատները, հայ եկեղեցուն, աղգային կրօնին տալիս է մեծ դեր: Ըստ Յովսէփ Էմինի, ժամանակակից հայ աղատադրական պայքարի շարժիչ ուժերն են՝ հոգեւորականութիւնը, վաճառական դասը եւ ժողովուրդը¹⁰: Այս մտահայեացքով է բարձրաց-

8. ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Երկեր, հտ. Բ, Երեւան, 1947, էջ 186:

9. Վ. ԲՐԻՒՍՈՎ, Հայերի եւ Հայաստանի մասին, Երեւան 1967, էջ 104:

10. Տես Վ. Ա. ԴԱՆԻԷԼԵԱՆ, Հայ մեմուարակամ գրականութեան պատմութիւնից, Երեւան 1976, էջ 107: Նոյնիսկ Շահամիրեանները, որ դարգացնելով Յովսէփ Էմինի հայեացքները, իրենց հրապարակախօսական, ծրարային երկերում, անկախ ու ազատ հայկական հանրապետութեան օրէնսդրութեան մէջ անջատում էին եկեղեցին պետութիւնից, դարձեալ չէին մերժում կամ չէին դիմադրել հոգեւորականութեանը, ընդհակառակն՝ ապագայ հանրապետութեան ղեկավար կազմում առանձնապառօկ տեղ էին յտկացնում նրանց ներկայացուցիչներին: Նկատենք, որ ԺԸ. դարում պարզացող ձերի եւ գրչի (Լէօ) շարժումների նշանաւոր ներկայացուցիչների միջեւ ուժեղանում է նաեւ գործնական կապն եւ համագործակցութիւնը (Շահամիրեանների եւ Իսրայէլ Օրու, Շահամիրեանների, Շահամիրեանների, եւ Մխիթարեանների միջեւ, անձամբ Մ. Սեբաստացու եւ Յովհաննէս Կոլոտի միջեւ եւ այլն): Այս առումով յոյժ ուշադրաւ է Պ. Խաչատրեանի Մի էջ Շահամիրեանների եւ Մխիթարեանների մատնագիրական առնչութիւնների պատմութիւնից քննական ուսումնասիրութիւնը, ուր հեղինակը բացայայտում է Հայկազեան բառարանի ուղեցուցային դերը՝ Յաւոր Շահամիրեանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» նշանաւոր դրքի վրայ:

ւում նաեւ կրօնական երգի գործնական դերը: Ահա թէ ինչու գրաւոր բանաստեղծութեան բոլոր ներկայացուցիչները՝ սկսած հոգեւոր հովիւներից՝ Մ. Սեբաստացի, Յ. Նալեան, Ս. Երեւանցի, Պ. Ղափանցի, Պ. Նախիջեւանցի... եւ վերջացած ժողովրդական բանաստեղծներով՝ Պ. Դպիր, Յովհ. Կարնեցի, ռուսական կողմնորոշման երգիչներով՝ Գր. Կամպանեան, Պ. Կաղզուանցի, Գ. Մելիքսեդեկեան, Ս. Պատկանեան եւ այլք, գրում են մեծ մասամբ կրօնական նիւթ կամ կրօնական երանգ ունեցող երգեր: Ուրեմն վերանորոգող դեղարուեստական գրականութեան ոլորտներում կրօնական երգի աշխուժութիւնը յետագիւմութեան արտայայտութիւն չէ, այլ աղբի վերակենդանութեան պաղաւտարին գործադրութեան մի միջոց: Աղբի եւ եկեղեցու միասնութեան խնդիրը վերանորոգութեան շարժման ամենակարեւոր պայմանն էր, դրան էին ձգտում տարբեր հաւատքի տէրութիւնների հովանաւորութեան կամ քծի տակ ընկած հայութեան առաջադէմ շերտերը՝ Պոլսում թէ Նոր Զուղայում, վեհնտիկում թէ Երուսաղէմում, Մադրասում թէ Աստրախանում, էջմիաձնում թէ այլուր: Միջնադարեան ղեղարուեստական երկն առհասարակ, ինչպէս նաեւ ԺԸ. դարի վերանորոգող կամ անցման շրջանի դրաւոր ստեղծագործութիւնը, պէտք է զնահատել ոչ թէ կրօնական եւ աշխարհիկ նիւթերի եւ պատկերների յարաբերութեան չափանիշով, այլ նրանց ներքին էութեամբ, առաջադրուած հարցերի կենսական նշանակութեամբ, այն չափանիշով միայն, թէ դրական երկն ինչպէս է յարաբերում ժամանակի առաջատար շարժմանը, ժողովրդի աղգային ճակատագրի հետ կապուած իրադարձութիւններին: Ուշագրաւ է, որ այս նոյն երեւոյթը, այլ կերպարանքով, դրսեւորւում է նաեւ նոյն ժամանակաշրջանի ռուսական ղեղարուեստական գրականութեան մէջ, այն հիմնական տարբերութեամբ, որ ռուսական իրականութեան համար անցման շրջանը վերանորոգութեան շրջան չէր, այլ՝ նորոգութեան: Թէեւ խաղաղ չի անցել նաեւ ռուս ժողովրդի կեանքն այդ դարերում, թէեւ նա յաճախ ստիպուած է եղել պատերազմական գործողութիւնների մէջ մտնել՝ մերթ թաթարների ու Շուէտների, մերթ թուրքիայի ու Պարսկաստանի դէմ եւ այլն, սակայն, քարեբախտաբար, Ռուսաստանը երբեք այնպիսի ահեղ վտանգի առաջ կանգնած չի եղել, որպիսին աղգային ձուլման վտանգն է: ԺԷ-ԺԸ. դարերում ռուս հասարակական մտքի, ռուսական ղեղարուեստական գրականութեան առաջադէմ ներկայացուցիչների համար աղգային եկեղեցու միջոցով ռուսական կեանքը ղեկավարելու խնդիրը դրեթէ բացառուած էր: Ընդհակառակը, կաշկանդող աւատապետական, տնտեսական ձեւերից աղատուելու, երկրի պետական կեանքի պարզացումը նոր, քաղքենի հիմքերի վրայ դնելու, գրականութիւնն ու գիտութիւնը ժողովրդականացնելու նպատակով, նը-

րանք պայքարում էին աւատապետական անշարժ օրէնքներին դէմ: Հին եւ նորի մենամարտն է ամէնուրեք՝ իւրաքանչիւր ժողովրդի մօտ իւրովի, նրա ազգային, ներքին եւ արտաքին վիճակին համապատասխան: Ռուսաստանի պատմա-տնտեսական, քաղաքական ու մշակութային կեանքին նոր երեւոյթների ազդեցութեամբ է, որ ժէ-ժԼ. դարերի ռուսական գրականութեան նշանաւոր - հոգեւոր եւ աշխարհական - գործիչները՝ Սիմէոն Պոլեցկի, Աւվակում, Մ. Վ. Լոմոնոսով, Գր. Բ. Դերժավին, Պ. Պ. Սումարկով, Ե. Ժ. Կոստրով, Վ. Պ. Պետրով, Ն. Մ. Կարամզին և այլք, իրենց երկերում սեղմում են կրօնական նիւթի շրջանակները եւ տեղի տալիս ազգային պաշտօնական պայքարի հարցերին: Բնական է, սակայն, որ այդ նոյն գործիչների մօտ, այնու ամենայնիւ, հաւատքը չի կորցնում իր հեղինակութիւնը. քրիստոնէական կրօնի մարդասիրական շատ չափեր, բարոյական աստուածաբանութեան շատ սկզբունքներ պաշտպանում են նաեւ ռուսական նոր գրականութեան ու գիտութեան առաջնորդները: Մ. Վ. Լոմոնոսովը 1739-1762 թուականին հրապարակ հանած իր նորարարական տեղեղծագործութիւնների հետ միասին («Ոտոնի գրաւումը», «Պետրոս Մեծ» եւ այլք) գրում է նաեւ կրօնական բաղամտիւ երկեր, սաղմոսներ. դրանք իրենց կրօնա-հայրենասիրական, ազատասիրական էութեամբ համահնչուն են հայոց համապատասխան երգերին, շարականներին, չափածոյ աղօթքներին: Ուրեմն անցման շրջանին հայ իրականութեան համար առաւել եւս, կրօնական երգի դերի բարձրացումը անխուսափելի էր: Գրական անկում չէր այդ, այլ՝ գրական վերելքի սկզբնական երեւոյթ:

Վերանորոգուող հին եւ նոր գրական երեւոյթների խաչաձեւ զարգացման յաջորդ շօշափելի արդիւնքը գեղարուեստական երկի լեզուի վիճակի բարեփոխութիւնն է: ԺԼ. դարում գեղարուեստական արձակ, չափածոյ ու թատերական երկեր էին յօրինում, հարուստ, գեղահիւս դասական հայերէնով, ե՛ւ «պարզ քանիւ»՝ մատչելի գրաբարով, ե՛ւ սկզբնաւորուող նոր գրական, ժողովրդական լեզուով՝ աշխարհաբարով, եւ նաեւ հայատառ թուրքերէնով: Այս երեւոյթը կար եւ նախորդ դարերում, բայց ԺԼ. դարում այն ստանում է զարգացման առաւել ծրագրային բնոյթ: Հրապարակ են դալիս գրաբար եւ աշխարհաբար բաղմատեսակ գործեր՝ բանաստեղծութիւններ, գեղարուեստական արձակ էջեր, թատերգութիւններ, հրապարակախօսական, կրթական, բարոյադիտական յօդուածներ, պատմագիտական, աստուածաբանական, փիլիսոփայական նոր հետազոտութիւններ, ընթերցանութեան եւ քերականութեան դասագրքեր, այբբենարաններ, բառարաններ եւ այլն: Տեսանք, որ նորայայտ փաստերի համաձայն ԺԼ. դարում Մխիթարեանները գրում

եւ բեմադրում էին նաեւ աշխարհաբար թատերատիւ խաղեր, պիէսներ¹¹: Ազգային նոր գրականութեան զարգացմանը ուղեկցում էր հայ նոր լեզուաչինութեան համար այն թէ՛ պայքարը, որ մղում էին ԺԼ. դարի վերանորոգութեան շարժման առաջաւոր գործիչները՝ դրոց լեզուի վատնական աղճատումների դէմ: Այս առումով ԺԼ. դարը թեւակոխում էր հայ լեզուաչինութեան պատմութեան համար եւս նոր շրջան, անցման շրջան: Մի կողմից անհրաժեշտ էր պայքար՝ ազատելու տակնիւնիկ գրաբարը վատնամիտ դպրոցի կործանարար ազդեցութիւնից, փրկելու, վերակենդանացնելու հայ հին եւ միջին դարերի մատենագիտական հարստութիւնը եւ զայն ի սպաս դնելու վերանորոգուող գրական շարժմանը, միւս կողմից անհրաժեշտ էր կանոնական հիմքերի վրայ դնել, ոտքի կանգնեցնել գրական նոր աշխարհաբար՝ հայ կրթական, լուսաւորական շարժման գաղափարները հնարաւորին չափ ժողովրդի մէջ տարածելու, «մերազնեայ համբալկաց» սերունդը կրթելու, դաստիարակելու նպատակով: Մ. Սեբաստացին, Յ. Նաթանը, Պ. Դաւիթը, Յովհ. Կարնեցին և այլք, երբ գրում էին գրաբար եւ աշխարհաբար բաղմազան երկեր, խորապէս գիտէին վերանորոգուող գրական շարժման համար «մեծագունեղ օգտակարութիւնն աշխարհաբարի»: «Ձայս քերականութիւնս, - գրում է Մ. Սեբաստացին՝ ուսումն սկզբնաւորող մանուկներին ուղղելով իր խօսքը, - գրաբար լեզուով չգրեցի, քանզի ձեզի աշխարհաբար հայերէնն պէտք է»¹²: Դարի ազգային գործիչները ցաւով մատնացոյց են աւում աշխարհաբար գրական հայերէնի իրաւագրկութեան պատմական դառն պատճառը. «Վասն անտէրունչ գորոյ ազգին մերոյ, ոչ է այնքան գործածեալ աշխարհաբար լեզուն մեր ի գրուածս եւ այսու է որպէս թէ զանաւոր ինչ»¹³, դժգոհում է Մ. Սեբաստացին: Հայ նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժման շուսամիտ գործիչները մտածում էին ոչ թէ պայքար հրահրել գրաբարի եւ աշխարհաբարի միջեւ, ինչը պատմական անհրաժեշտութիւն դարձաւ ԺԺ. դարի 30-50ական թուականներին միայն, այլ գրոց հին լեզուի անաղարտ պահպանութեամբ եւ գրական նոր աշխարհաբարի կանոնական գործածութեամբ, նաեւ հայատառ թուրքերէն գրականութեան օգնութեամբ, նրանց գոգահեռ զարգացման պայմաններում, խթանել հայ վերանորոգուող գրական-կրթական բարդ շարժումը:

11. Հ. Լ. Զեֆեման, Զ. գծ., էջ 15-26:

12. Մ. ՍԵԲԱՍՏԱՑԻ, Դուռն քերականութեան աշխարհաբարի, Վենետիկ 1727, էջ 3:

13. Անդ, էջ 4:

* * *

Վերանորոգվող զեղարուեստական դրականութեան նուաճումները ամրապնդվում էին զարգացող հայ-ռուսական յարաբերությունների ոլորտներում:

Հայոց երկրին Ռուսաստանի կազմին մէջ մտնելու 1828 թուի պատմական իրադարձությունը ազգային վերածննդի առաջին կարեւոր քայլն էր: Երկու ժողովուրդների փոխյարաբերությունները սկսվում են վաղ շրջաններից, սակայն հայութեան համար վճռական այդ գործողություններն իրականացվում են շրջագծում է ԺԸ. դարը: Իրապէս, հայ ժողովրդի դրական վերանորոգության շարժումը Արեւմուտքով էլ էր սկսվում ու աւարտում: Արեւելքում, բուն հայրենիքում, ծայր առած ազգային-ազատագրական շարժումները եւ արեւմուտքում՝ հայ պարսկական վերակենդանացման ու մշակութային շարժումների ալիքները՝ ներթափանցում են հայաշատ հեռու և մոտիկ կենտրոնները եւ պնդվում առաւել փոքր արձագանք ստանում ռուսական հողում: Անվիճելի է, որ ԺԸ. դարից ի վեր, յատկապէս արեւելահայութեան արտաքին և ներքին կենսի վրայ, իր փոքր կողմերով, ոչ մի ժողովուրդը եւ ոչ մի երկիր այնքան փոքր ու արմատական, աչքան նշանակալից դեր չի կատարել, որքան Ռուսաստանը եւ ռուս ժողովուրդը: Օտար նուաճողներից հարածուած, աշխարհասփիւռ հայ ժողովրդի մոլորեալ զանգուածների ճակատագրի տնօրինման, նրան պարսկա-թրքական լծից ազատագրելու հարցում առաւել վճռաբար եւ պետականօրէն մտածել է Ռուսաստանը: Պետրոս Առաջինի եւ Եկատերինա Երկրորդի կայսերական նամակներն ու հրովարտակները՝ հայութեան տարազիւ զաւակներին ռուսական հողում քնակեցնելու, նրանց իրաւա-տնտեսական, օրէնսդրական առանձնաշնորհումների վերաբերեալ եւ այլն, նպաստում են հայ ժողովրդի նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժմանն առհասարակ: ԺԸ. դարից ի վեր Մոսկովան, Պետերբուրգը, Աստրախանը, Նոր Նախիջևանը, Ղարաբ, Մոզդուկը պառնում են հայութեան տնտեսական եւ մշակութային կենսի հաստատուն, ապահով կենտրոններ: Այս քոլորի հետ միասին նաեւ Ռուսաստանի եւ Թուրքիայի, Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ ծագած պատերազմները եւ յատկապէս 1768-1774, 1787-1791 թուականների ռուս-թրքական պատերազմներում Ռուսաստանի ունեցած առաջաւոր դերն ու նուաճումները ոգեշնչում են հայ ժողովրդին, խորացնում նրա մէջ ազատասիրական յոյսերը եւ հաւատը Ռուսաստանի նկատմամբ. «Ուստի ունեւք պարտականութիւն, - գրում են Աստրախանի հայոց Դատաստանագրքի հեղինակները -, մինչեւ վերջին կաթիլ արեամբ մերով հաւատարմութեամբ ծառայել ամենաողորմ կայսերութեան մերոյ ռուսաց եւ հրամանաւ նորին կայ-

սերական մեծութեան, որպէս յայտնի է 1765ի Յունուար 13ի հրովարտակաւ, հետեւել ըստ սահմանադրութեան կանոնին մերոյ»¹⁴: Պատմա-քաղաքական նպաստաւոր իրադարձությունները ծնում են գաղափարական մտաւորականութեան նոր ուժեր, հայ առեւտրական, դինուորական, կրթական, եկեղեցական շրջաններից վեր բարձրացող ազգային նոր գործիչներ՝ Ժառայէլ Օրի, Դաւիթ Բէկ, Ստեփանոս Շահումեան, Մխիթար Սպարապետ, Աւետիս քահանայ, Յովսէփ Խմին, Մովսէս Սաֆարեան, Գրիգոր Կամարանեան, Շահամիրեաններ, Թադէոս Ջուղայեցի, Յովսէփ Արղութեան, Յարութիւն Շմաւոնեան, Յակոբ Ջուղայեցի, Սիմէոն Երեւանցի, Ղուկաս Կարնեցի, Ստեփանոս Խոջումեան, Վաղամ Վահանեան, Ասլան Աթաբէկեան, Գէորգ Մելիքսեդեկեան, Սերովբէ Պատկանեան, Հ. Մինաս Բժշկեան և այլք: Սրանց գործնական ջանքերով ընդհանուր հայութեան մէջ ներթափանցում եւ արմատաւորւում է ռուսափրութեան ոգին, ռուսական կողմնորոշումը: Այդ գործիչների անուններով կամ նրանց մասին մեզ հասել են հայ-ռուսական բարեկամական առընչություններն արձագանքող բազմաթիւ երկեր՝ աղօթքներ, աւանդություններ, քարոզներ, թղթեր, նամակներ, ուղերձներ, կոնդակներ, պատմական-հրապարակախօսական, քերականական աշխատություններ, դասադրքեր, բառարաններ, գեղարուեստական ինքնուրոյն եւ թարգմանածոյ տեղագրործություններ, բանաստեղծություն, ուղեգրություն, դրոյց, տեսիլ եւ այլն:

Հայ-ռուսական յարաբերությունների շուրջ հիւսուած զեղարուեստական առաջին ստեղծագործությունները կարող են նկատուել Ժառայէլ Օրիի եւ հայ Մելիքների Պետրոս Մեծին ուղղուած թղթերում ակնարկուած աւանդական դրոյցներն ու դուշակությունները: Այս բնոյթի երկերի մասին փիտական, քննական մի ամբողջ հայեացք ունենալու համար մենք պարտական ենք ակնաւոր պատմագէտ Ա. Գ. Յովհաննիսեանին: Յաւօք, խնդրոյ առարկայ հարցի շուրջը եղած մարդարէութիւնները մեզ հասել են ոչ իբրեւ գրական ամբողջական երկեր, այլ սոսկ յուշեր, վերապատումներ միայն: «... Մոսկովեան օգոստոսփայլ տնից պիտի դայ մեծ մի իշխան, աւելի քաջարի քան Աղեքսանդր Մակեդոնացին, պիտի իր ձեռքը վերցնի Հայաստանի թագաւորութիւնը եւ վերականգնի քրիստոնեաների ազատութիւնը»¹⁵: Այս է նրանցում շօշափուած հարցերի գաղափարական հանդուցակէտը: «Նիւթեր են դրանք, - նկատում է Ա. Գ. Յովհաննիսեանը -, որ մատակարարում են մեզ վերին աստիճանի հետաքրքրական ու նշանակալից... վկայութիւնները: ... անհրաժեշտ է հե-

14. Մ. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. քիւ 7383, Թերթ 55ա:

15. Ա. Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, Երեւան 1957, էջ 13:

տազատել այդ նիւթերը, ... քանդել միջնադարեան տեսիլների ու գուշակութիւնների խճճուած կծիկը եւ գտնել հայ ազատագրական իշխող մտայնութեան այն թելը, որ ծայր առնելով հեռու անցեալից, դարիս հասնում է Օրիի ժամանակաշրջանին»¹⁶, միջնադարից մինչեւ նոր ժամանակները: Հայոց ազատագրութեան հարցի շուրջ հիւսուած դարերի աւանդութիւնները ու մասունքների յայտնութիւնը թոյլ է տալիս մտածելու, որ ռուսական կողմնորոշման գրական առկայ-ծումները եղել են նաեւ ԺԸ. դարից առաջ: Այսու ամենայնիւ, հայ ազատագրական հարցի աւանդական նորոգ խորհուրդը, արդէն իբրեւ զեղազդիտական հայեացք, իբրեւ առարկայական, կենսական ըմբռ-նում արտայայտուած է ԺԸ. դարի գրական քաղմածիւ ստեղծագոր-ծութիւններում: Հանդամանալից քննութեան թողնելով յետագային, աշատեղ յիշենք մեզ յայտնի այն երկերը, որոնք դուրս են մնացել հայ գեղարուեստական գրականութեան պատմութեան ընդհանուր շարադրանքից եւ պատմա-գեղարուեստական որոշակի արժէք ունեն: Ահա դրանց ոչ վրիւ ցանկը. «Անցք եւ պատմութիւն մեծին Պետրոսի եւ Մարկոսի Միրզախանովին, որոյ ձեռամբն աղատեցաւ մեծն Պե-տրոս», «Վասն տեսլեան իմոյ», «Ճանապարհորդութիւն Պետերբուրգ-էից Պօլիս եւ վերադառնալս ի Պետերբուրգ», «Ի նուազիւն Հայոց ազգի», «Սարասկերտը իմին փաշա», «Ընդ ծով Կարմիր անթաց ուտիւք», «Ի վայրի ծաղկազարդ, քի զնացա ջուրց քաղցրիկ», «Ահ ան-քնին խորոցն էին», «Աստուած հզօր, ամենակալ», «Յորժամ հասա-նէր լուրն փաղալոյ անյաղթ», «Յոհաննիսի Պերճ ի շխանի», «Ասա-ցեալ զայս իմոյ բանի», «Կայսրս քարի եւ իմաստուն», «Կայսրուհիդ՝ տասնամեայ կրող ծիրանին», «Երբ ողջունէր կայսեր մեծին», «Թաղ եւ պարծանք տանն ռուսաց», «Ի սուրբ ցեղէ ընտրեալ», «Արդ, օ-րինակ քեզ մեզ արի Սիւնեաց ի շխանս», «Առ դրունս կայսեր կանգ-նիմ» եւ այլն: Թուարկուած երգերից առաջին երեքը գեղարուեստա-կան արձակի նմոշներ են՝ զրոյց, տեսիլ, ուղեգրութիւն, իսկ մնա-ցածը՝ քնարական, պատմաքնարական բանաստեղծութիւններ եւ պոէմներ, որոնք չնչին բացառութեամբ, ստեղծուել են ԺԸ. դարում եւ ԺԹ. ի առաջին տասնամեակներում: Այս երկերը, նոյն ժամանա-կաշրջանից արդէն յայտնի՝ կամ ճանաչուած գտած համապատասխան ստեղծագործութիւնների հետ միասին, վերանորոգուող հայ գեղար-ուեստական գրականութեան մէջ ստեղծում են մի նոր շերտ, բե-րում են նոր խոհեր, նոր հերոսներ, նոր բնաւորութիւններ, նոր մի-ջավայր¹⁷:

16. Անդ, էջ 15:

17. Տես Արեւիկեան Հայաստանի Ռուսաստանի միամալու արձագանգները հայ գրա-կամութեան մէջ, քնարի պատրաստումը, ներածութիւնը եւ ծանօթութիւն-ները՝ Պ. ՅԱԿՈԲՅԱՆ, Երեւան 1973:

ԺԸ. դարի վերանորոգուող գեղարուեստական գրականութեան գաղափարական փոխակերպութեան վերելում նկատուած դժերը զար-գանում են հայ ազգային ազատագրական շարժումների, հայ-ռուս ժողովուրդների քաղաքական դաշնակցութեան՝ Դաւիթ Բէկից մինչեւ Յովսէփ Էմին եւ Շահամիրեանները ընկած ժամանակահատուածում: «Ի նուազիւն Հայոց ազգի», «Ձօրավար է իմին փաշան», «Կայսր բարի եւ իմաստուն», «Վասն տեսլեան իմոյ», եւ այլ գործեր պատմական այս ժամանակահատուածի իրապատկերներն են: Սիւնիքի ազատա-գրական կռիւների ականատես, ժողովրդական բանաստեղծ Սահակ Երէցը յորդորում է Դաւիթ Բէկի հզօր զինակից տէր Աւետիսին՝ ետ դառնալ յուսահատական մեկուսացումից, կրկին ռազմի դաշտ մըտ-նել, առաջնորդել հայ դիւցազուններին, ազատագրել հայոց սրբա-դան հողը բռնակալներից: Ժողովուրդը փառաբանում, մեծարում է իր ազգային հերոսին, ժողովուրդը քաջալերում, յուսադրում է նրան եւ թախանձում՝ կրկին մարտադաշտ ելնելու եւ առաջնորդելու իրեն՝ ժողովրդին:

Ի նուազիւն Հայոց ազգի
Ի դառն եւ նեղ ժամանակի,
Յաղթող զօրեղ երեւեցար,
Քաջ զինաւոր տէր Աւետիս:

Սարսին ի քէն ազգն Տաճկաց,
Ձի յաղթեցեր նոցին զօրաց.
Ձարքայական զէնն Քրիստոս,
Տէր Աւետիս, քեզ պարգեւաց:

Հասեր արագ բերդն Մեղրին,
Սատակեցեր ըզնարածին.
Երեսն հազար թուղթ խարածին,
Այրեցեր ի մէջ կրակին:

Այնիւ զօրօք քաջ եւ ընտիր,
Ազուրեաց դաշտն ճեպէիր,
Անարդողաց սրբոյ խաչին,
Տէր Աւետիս վրէժխնդիր:

Կրկին խնդրեմք արիանալ,
Պալի Պէկին զինուորանալ:
Հայոց ազգին թեւ եւ թիկունք,
Տէր Աւետիս, բարեաւ երթաս:

Էրէցս ապիկար, անարժան,
 Խնդրեմք սրբոցն համանգամայն.
 Խաչեալ Աստուած, Տէր իմ Յիսուս,
 Տէր Աւետիս, քեզ պահապան¹⁸:

Բանաստեղծը շնչաւորում, վերակենդանացնում է պատմութիւնը ինչպէս որ կայ, բարձրացնում է իր ազատատենչ ժողովրդի ձայնը, յայտնում նրա կամքը, մեկնում՝ նրա միտքն ու հոգին. «Այս տէր Աւետիս արար զբազում մեծամեծ քաջութիւնս, որպէս եւ ի պատմութեանս իսկ ամենայնի. զի էր կարի քաջ եւ արիասիրտ, եւ զօրաւոր յոյժ բանիւք եւ գործովք եւ վասն այսորիկ նա յորմէ հետէ հեռացեալ ի հայրենի երկրէն պանդխտեցաւ ի Գաղատիա, բազումք յորդորէին զնա ի հայրենի նորին դաւառէ՝ անդրէն դառնալ առ նոսա եւ պաշտպանել զերկիրն զայն. բայց նա հրաժարէր յազապս պատուոյ իւրոյ քահանայական կարգին, որպէս եւ ոմն յարգելի երկացանց անտի գրեաց առ նա զայս ոտանաւոր առ նոյն յորդոր»¹⁹:

Դարձեալ հաղուադէպ ու աւարտուն քնարական մի պատկեր է «Զօրավար է Էմին փաշան» տկուածքով հայատառ թուրքերէն երգիծական երգը: Իրական փաստի եւ արարած յոյդերի ճշմարիտ մի վերարտադրութիւն է այն, հայ եւ ռուս զինուորներու համատեղ մարտերի ու յաղթանակի եւ թուրք պարտուող զինուորի մասին ժողովրդական արձագանգ, չափաբերուած մի յուշ: Անանուն բանաստեղծի երգիծական այս խաղի եղանակով է երգուել ԺԸ. դարի բանաստեղծ Գրիգոր Օշականցու «Զօրեղ փչումն ուժգին հողմոյն»²⁰ հայրենասիրական բանաստեղծութիւնը: «Զօրավար է Էմին փաշան» երգը անկասկած երգուել է նաեւ հայ-ռուս եւ թուրք զինուորներու շրջաններում: Սահուն կշռոյթով, կարճ տողերով, պարզ յանգով ու վարակիչ անմիջականութեամբ, թուրք զինուորի բերանով ասուած այս փոքրիկ խաղը պատմական մեծ ճշմարտութեան անդրադարձումն է: Մարտի մէջ են Էմին զօրավարի հայ-ռուս քաջերից բաղկացած զօրախումբը՝ իր լաւադոյն հրետանաւորներով ու նաւաստիներով եւ Մուսա փաշայի թրքական աղքատ ու լքուած, ջարդուած ու պարտուած զօրախումբը, որի հրետանաւորները կրակել չգիտեն, նաւաստիները նաւարկել չգիտեն, սուլթանից օգնութիւն չկայ, եւ բոլորը գերի են յանձնուած «գեալուր Մուսկովին»:

18. Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», աշխատասիրեց Հ. Ս. ԱՐԱՄԵԱՆ, Վենետիկ 1978, էջ 144-145: Նոյնը հրատարակուած նախագէս՝ Հ. Եղիա փչչիկեանէ, «Դաւիթ Բէկ»ի պատմական աղբիւրները եւ Միքայելեան, «Բաղմա-վէպ», ԴԶ (1938), էջ 187:

19. Դաւիթ Բէկ, Նշ., էջ 144: Հ. Ե. Փէճիկեան, Ոշ. յօդ., էջ 187:

20. Մատենադարան, Երեւան, ձեռ. Թիւ 10291, Թերթ 26ա:

Զօրավար է Էմին փաշան,
 Հրամանն անցնում է ամէն տեղ,
 Փախաւ, պարտուեց Մուսա փաշան.
 Գերի դարձանք չէկ գեալուրին մենք:

Մեր դրպաններում չկայ փարա,
 Մեր սիրտն ու հոգին դարձել է եարա,
 Այլեւս մեզ փրկութիւն չկայ.
 Գերի դարձանք չէկ գեալուրին մենք:

Հրետանաւորն է նշանառու,
 Նաւաստին է քաջ նաւավար,
 Սարգաթներն են հողէտու.
 Գերի դարձանք չէկ գեալուրին մենք:

Հրետանաւորը կրակել չի կարող,
 Նաւաստին՝ նաւարկել չի կարող,
 Սուլթանից մեզ օգնութիւն չի.
 Ողջ գերի դարձանք, ողջ գերի դարձանք
 Շէկ Մուսկովին մենք²¹:

21. Մատենադարան, ձեռ. Թիւ 6440, Թերթ 8ա-8բ: Ստորեւ ներկայացնում ենք երգի բնագիրը ըստ ձեռագրի: Հայերէն թարգմանութիւնը կատարել են Օ. Եղանեան եւ Ժ. Աւետիսեան:

ԽԱՂ Ի ԳՈՅՆ՝ ԶՕՐԵՂ ՓՉՈՒՄԻ

Սարսակէրտր էմին փաշայ,	Դօփճիլար դօփ աթաբէ,
Հօքմի կէշար տաղու տաշայ,	Կէմիրճիլար՝ կէմ սուրաճի,
Պօղլուն վէրտի Մուսա փաշայ.	Սալտաուլար ճան ալըճի.
Հափ եսիր օլտուփ սարի կեսուր	Հափ եսիր օլտուփ սարի կեսուր
ալինտան:	ալինտան:
Ճիպիլիդտայ եօխտուր փարայ,	Դօփճիլար՝ դօփ աթա պիլմազ,
Ճիկարլմազ օլուփ եսրայ,	Կէմիրճիլար՝ կէմ սուրա պիլմազ,
Տահայ օլմազ պիլայ չարայ.	Փատիլաշտան իմտատ օլմազ,
Հափ եսիր օլտուփ սարի կեսուր	Հափ եսիր օլտուփ, հափ եսիր օլտուփ
ալինտան:	Սարի Մօսկովի ալինտան:

Այս բանաստեղծութիւնը մեզ հասել է ուշ շրջանի ձեռագրով (ԺԺ. դար): Գրչին յայտնի չի եղել, որ ընդհանրապէս «Զօրեղ փչումն» սկսուածքով երգն է երգուել «Սարսակէրտր էմին փաշայ» երգի եղանակով: Այս եղբայրացութեան համար մեզ հիմք է ծառայում Գրիգոր Օշականցու 1776 թուականի ինքնագիր Տաղարանը, ուր հեղինակը առաջարկում է իր «Զօրեղ փչումն» երգը երգել հայատառ թուրքերէն յիշեալ երգի եղանակով (Մատենադարան, Երեւան, ձեռ. Թիւ 10291, Թերթ 26ա):

Վերանորոգող դեղարուեստական դրականութիւնը անդրադարձնում է այն բեկումը, որ կատարւում է ռուսական երկնքի տակ պատասպարուած հայութեան իրաւատնտեսական կեանքում: Առաջին անգամ դրական ստեղծագործութեանը նիւթ են տալիս, գործողութեան վայր, պատկեր, առարկայ են դառնում ռուսական առանձին քաղաքներ, գետեր, բերդեր, եկեղեցիներ՝ Մոսկուա, Պետերբուրգ, Աստրախան, Նոր Նախիջևան, Դոն, Վորոնա, Կրեմլի տաճար, Ս. Կատարինէ եկեղեցի, Ս. Դիմիտրիի բերդ եւ այլն: ԺԸ. դարի վերջի եւ ԺԹ. դարի առաջին երեք տասնամեակների բանաստեղծութեան մէջ մի ամբողջական շարք կարող են կազմել միայն Նոր Նախիջևանի հիմնադրմանը եւ Եկատերինա Երկրորդին նուիրուած երգերը: Սուրբ Դիմիտրիի բերդում 1780 թուականի աշնանը Նոր Նախիջևանի հիմնադրման առթիւ կազմակերպւում են մեծ հանդիսութիւններ, որոնց արձագանդները տպագրւում են ռուսական թերթերում: Պետերբուրգի կայսերական Ակադեմիան, վերոյիշեալ հանդիսութիւնների շուրջ եղած հաղորդագրութիւններից ելնելով, ըստ իւր սովորութեան, ի պատիւ եւ ի փառս Եկատերինա Երկրորդի, շարադրում է մի բանաստեղծութիւն եւ տպագրում «Գաղետա»-յում: Հայկական տպարան չլինելու պատճառով՝ այդ հանդիսութիւնների արդիւնքները հայերէն չեն հրապարակւում: Յետագայում, 1794 թուականին «Աղդարար»-ը անդրադառնում է պատմական այդ ուշադրաւ իրադարձութեանը եւ տպագրում է նաեւ նոյն «Գաղետա»-յում հրապարակուած ռուսերէն բանաստեղծութեան հայերէն թարգմանութիւնը:

Ընդ ծով կարմիր անթաց ոտիւք Բարայէյն հին անցանէ,
բարձր բազկաւ, հըզօր ձեռօք յաղատութիւն ժամանէ:
Յանարգ լըծոյ ծառայութեան յանձառ փառս ելանէ,
յարդիւնարար մեղր եւ կաթին բըղխօղ երկիր մըտանէ:
Նըմին նըման այժմ անցեալ ի յաղմըկաց պատճառէ,
յաղթական երգս երգեն այսօր թաղուհւոյդ ԵԿԱՏԱՐԻՆԷ:
Խըմբիւք պարեն սակս փըրկութեան ժողովք քըրիստոնէական,
զի զգաւադանն ի խանութեան ծաւալ տեսին ի Նախիջևան.
Աղդու ձայնըն կայսերական է հաս յունկն ազգաց համայն,
նայ հրամայէ, միանդամայն հընազանդին ջուրքն ամենայն²²:

Ո՞վ է նորախորհուրդ այս երգի հեղինակը՝ չգիտենք: «Զի՛ զգաւադանն ի խանութեան ծաւալ տեսին ի Նախիջևան» տողը թոյլ է տալիս կարծելու, որ նրա հեղինակը հայ մտաւորական է, Նոր Նախիջևանցի մի բանաստեղծ, որ առընչւում է Պետերբուրգի կայսերա-

22. «Աղդարար», 1794, էջ 40:

կան Ակադեմիային եւ յանձնարարութիւն ստանում, աւուր պատշաճի դրելու ռուսերէն մի երգ, որը ապա փոխադրւում է հայերէնի: Կամ գոցէ հակառակը. բայց այդ էլ կարելի է, այլ այն՝ որ Նոր Նախիջևանի հիմնադրութեան առթիւ հայ-ռուս մտաւորականութեան շրջաններում արտակարգ իրադրութիւն է ստեղծւում, եւ ժողովուրդը ներքոյում է իր երախտաւորին՝ բանաստեղծութեամբ: Ռուսաստանը պէտք է տնօրինի հայ եւ քրիստոնեայ այլ ազգերի խաղաղութեան հարցը: Ահա նոր եւ առաջադէմ այն ըմբռնումը, որ արձագանք է ստանում հայ-ռուսական բանաստեղծութեան մէջ՝ ԺԸ. դարում:

Գաղափարական նոյն դրոշմը ունի նաեւ «Կայսրուհի» տասնամեայ կրող ծիրանին» սկսուած քով բանաստեղծութիւնը: Այն հիւսուել է Եկատերինա Երկրորդի գահակալութեան տասներորդ տարեդարձի առթիւ: Յետագայում զայն հայերէնի է թարգմանել նշանաւոր հայագէտ, ռուսագէտ, արուեստագետ, բանաստեղծ եւ թարգմանիչ Հ. Մինաս Տրապիզոնցի Բժշկեանը: Անծանօթ բանաստեղծը քաջայայտում է Ռուսաստանի ազատագրական նկրտումների համազգային միտումը, մեկնաբանում՝ Ռուսաստանի քաջաբեկ ղեկը ոչ միայն հայ, այլ եւ եւրոպական ժողովուրդների խաղաղութեան գործում:

Պերճ անուամբ հանգիստ մայր՝ բարութեամբ լի.
Տէր քեւ տայ խաղաղ վրդովեալ երկրի,
Հանգիստ Ռուսիոյ յայլ սահման հոսի.
Լնու բարութեամբ տեղիս չըջակայ
Պատերազմին քո զօրք ընդդէմ մարտի՝
Զէն քո խաղաղէ զաշխարհ Եւրոպայ²³:

Հայ-ռուսական քաղաքական յարաբերութիւնների դրական արձագանդների մէջ մի առանձին փայլ ու իմացական ոյժ ունի «Մորհըրդաժութիւն գլխի քաղաքէն» քնարական պոէմը: Գաղափարի, յոյքի, պատկերների բանաստեղծական մի իւրովի ձուլուածք է այն, ուր թանձրանում է հայ ժողովրդի դարերի պատմութիւնը: Դարձեալ անանուն եւ հաւանօրէն դարձեալ Նոր Նախիջևանցի բանաստեղծի նորաշունչ ու հոգեպարար այս երկը, որ ալիքանական ազգային բանաստեղծութեան բոյրն ունի, գրուած կարող է լինել ԺԸ. դարի վերջում կամ, աւելի ուշ, ԺԹ. դարի առաջին քառորդում, յամենայն դէպս մինչեւ 1828 թուականը: Ազատասէր բանաստեղծը, ընդհանուր պատմութեան թատերաբեմում հայ ժողովրդի տեղն ու դերը մատնանշելով, նրա մաքառումներով լի ծանր կեանքի ու պայ-

23. Հ. Մ. ԲժՇԿԱՆ, Քերականութիւն ռուսերէն-հայերէն, Վանսիկ 1828, էջ 308:

քարի հաշուեկշիռն անելուց յետոյ, հաստատում է պատմական այն ճշմարտութիւնը, թէ բոլորից խարուած ու ճնշուած, տառապած ու տանջուած, աշխատապաշտ, տոկուն եւ իմաստուն իր ժողովրդի վերակենդանութեան համար ամենամեծ ջանքերը կատարելով են ռուսական հողում:

Թաղուհին Մոսկովայի սիրոյ, ի շնորհաց,
Հան զիմ աղբիւր ի թոյ բռնաւոր թաթարաց,
Ած Գեղեղ յիւր աշխարհ, ետ ձեզ կեանս աղատից,
Կեալ, չուել անձնիշխան, ըստ իւրեանց հաճոյից:
Ուր յառաջն տիղմն եւ գէճ, անդ այժմիկ հայկական
Բարձրանայ բարեղարդն մարտադաշտն իջեան,
Հոսայ հեղ Տօնաւիս, ոռոգեա՛ զայդ երկիր,
Երջանիկ քո եղերք՝ յորս հանգչի աղբ ընտիր:

Մոսկովա-թաղուհու շնորհները բացում են հայութեան վերանորոգութեան ճանապարհը. բանաստեղծը մեկնում է իր շինարար ժողովրդի անհատականութեան, նրա աղբային նկարագրի կենսական դժերը:

Ձաղդդ այն ոսկին թանկ ոչ վատնէ ինչ ունայն,
Այլ յայլ ինչ բարձրագոյն եւ յայլ ինչ պիտեւան.
Տալ զկեանս զաւակաց հրեշտակաց համանման,
Կրթութիւն եւ ուսումն, քարի վարք մարդկութեան:
Լոցին փողք, դրուատք, թռչնեցին եւ դափնիք,
Այլ ձեր սէր հայրենաց մնացէ՛ միշտ ողջիկ,
Յորչափ կայ աղբ հայոց, իւր ի սիւսս հնութեան,
Ձնախողջոյնս յարքայից ընկալցի Նախըռան²⁴:

Վշտաշատ բանաստեղծը Անիի ասերականերից ուղղում է իր հայեացքը հայոց դառնաղէտ անցեալին եւ ասլա յոյսերով լեցուն խորհրդածում, սպասում: Դիմադրողական, մաքառողական պայքարի մէջ աղբը ոչ թէ կորչում, ոչնչանում է, այլ աճում է, բարձրանում, դրո՛ւմ է Յ. Ծահաժիրեանը իր «Յորդորակ»-ում, աչքի առաջ ունենալով ռուս ժողովրդի իմաստուն փորձը, աղբ՝ որ աներեւակայեղի տոկունութեամբ եւ խիզախութեամբ կանգնելով ահեղ թշնամիների դէմ յանդիման, հաստատեց իր ազատութիւնը եւ բարդաւաճեց, «գորացաւ ի նորումս քան զամենայն»:

24. «Նոյեան Աղանի», 1853, թիւ 45:

Ձի ոչինչ աղբ ի պահել զազատութիւնս իւր
Ի պատերազմիլն երբեք յիւրմէ ինչ պակասեցաւ,
Եթէ ոչ եւ մանաւանդ օր քան զօր՝ աճելով
Եւ բազմանալով, ուռճացաւ, պերճացաւ:

Ահաւասիկ այնքան նուաստագոյն աղբն ռուսաց
Որպէս ի նորումս քան զամենայն գորացաւ,
Թափելով ինքնին զինքն ի դրացեաց հալածելոյն,
Մինչեւ ի տիեզերակալ լինիլ մարթացաւ²⁵:

«Տէր գորացուացէ զնոսա (Ռուսներին - Շ. Ն.) եւ մեզ դուռն ողորմութեան բացցէ շնորհիւ իւրով», արձագանդում է Յակոբ Ծահաժիրեանին Թաղէոս Ձուղայեցին: Լուսամիտ բանաստեղծը, վերարձարձելով փր «Ողբ Հայաստանեայց»²⁶ ծրագրային պոէմի խորհուրդը, հայ ժողովրդին, հայոց երիտասարդութեանը կոչ է անում լուսաւորուելու ռուս ժողովրդի օրինակով. «Գոյ մեզ օրինակ աղբն ռուսաց, - դրում է Թաղ. Ձուղայեցին 1787 թուականին Պետրոս Առաջինի կենսագրութեան թարգմանութեան առիթով - , եթէ որպէս ընտրեալ եւ սիրողք եղեն ուսման եւ ի ձեռն մարդի, եւ որպէս փայլին այսօր գրեթէ պերճք եւ կորովիք, եւ յաղթողք գտան ի մէջ ամենայն աղբի եւ փայլին ամենայն երջանկութեամբ...»: Թ. Ձուղայեցին յորդորում է՝ աչքի առաջ ունենալ ռուս ժողովրդի փորձը, ճանաչել ուսման, գիտութեան յարգը, կրթութեան սերմերը տարածել ժողովրդի մէջ: «Աղբ, ո՛վ աղնիւք եւ քարեսէր ընթերցողք, - շարունակում է՝ հրապարակախօս բանաստեղծը - , դուք ինքնին բարեպէս գիտէք, որ սերմանելն զիմաստութիւն ի մէջ հասարակաց եւ ի տեղիս-տեղիս տալ բանալ կրթարանս քանադան լեզուաց եւ սփռել զիմաստութիւնս ի մէջ ժողովրդոց եւ տալ տպել զհնագոյն պատմութիւնս առ ի օգուտ աղբին եւ ի ընթերցումն հասարակ ժողովրդոց...»²⁷: Աղբային լուսաւորութեան գործը նորովի առաջ վարելու, արուեստների եւ գիտութիւնների մէջ հմտանալու համար, գործիչը մատնանշում է Ռուսաստանի եւ նրա «բարի եւ իմաստուն» կայսեր՝ Պետրոս Առաջինի նախընտրած ճանապարհը: Այս նոյն տրամադրութեամբ է բանաստեղծը գրում նաեւ «Գովեստ կայսերն Պետրոսի» երգը: Դա ռուս ժողովրդի պետական մեծ գործիչին նուիրուած հայերէն առաջին տպագիր բանաստեղծութիւնն է. պարզ, անմիջական,

25. ՅԱԿՈԲ ԾԱՀԱՋԻՐԵԱՆ, Նոր տետրակ որ կոչի Յորդորակ, Մադրաս 1772, էջ 35-36:

26. ԹԱԳԵՈՍ ՍՈԳՐՆԵԱՆՅՈՒ ԶՈՒՂԱՅԵՑԻ, Տետրակ որ կոչի Ոգր Հայաստանեայց, Մադրաս 1791:

27. ԱՅՈՂ, էջ 22, 26:

ճշմարիտ յոյզով՝ Թ. Ջուղայեցին ներբողում է Պետրոս Առաջինին, որն իմաստութեամբ ու անօրինակ խիզախումով կարողացաւ սրատուել Ռուսաստանի «խփեալ մտաց քողը», լուսաւորել «խաւարեալ անձանց» սիրտն ու հոգին, եւ արիութիւն ներարկել իւր ազգին.

Կայսրըս բարի եւ իմաստուն...
 Զարթոյց ի քնոյ, արար արթուն.
 Բանիւ իւրով ուշիմացեալ,
 Բոյս նորատունկ ազգին եղեալ...
 Խփեալ մտաց քող պատառեալ...
 Լուսաւորեաց տանձինս մոլեալ,
 Զքնաղ սիրոյ պտուղ տուեալ,
 Զան ետ ազգին արիանալ²⁸:

Երեւութական է եւ այն, որ դարերի ճամբայ անցած հայ ներդրական բանաստեղծութիւնը ստանում է քաղաքական նոր հնչեղութիւն, հանդէս է բերում պատմական նոր կերպարներ, նոր անձինք: Սահակ Երէց, Գրիգոր Կամպանեան, Պօղոս Կաղզուանցի, Ստեփանոս Խոջումեանց, Գէորգ Մելիքսեդեկեան, Սերոբէ Պատկանեան, Ասլան Աթաբէկեան, Հ. Մինաս Բժշկեան եւ անանուն շատ բանաստեղծներ ու արձակագիրներ մեծարում են ժամանակակից հայ, ռուս պետական, ռազմական գործիչներին, թաղաւորներին, իշխաններին, զօրավարներին, զինուորներին, գիտութեան ու մշակոյթի նշանաւոր անձանց՝ Դաւիթ Բէկ, Մխիթար, Տէր Աւետիս, Յովսէփ Էմին, Յովհաննէս իշխան, Մինաս իշխան, Պետրոս Առաջին, Եկատերինա Երկրորդ, Աղեքսանդր Առաջին, Յիցիանով, Պասկելիչ եւ այլք: Ակնառու է, որ քան յառաջանում ենք ԺԸ-ից դէպի ԺԹ. դարը, այնքան հարստանում է հայ-ռուս բարեկամութեան ու զինակցութեան պատմութիւնը հերոսական դրուագներով, այնքան թաղմանում են եւ գրական երգերն ու ներբողները այդ պատմութեան էջերում: Ս. Պատկանեանը 1796 թուականին դրած իր բանաստեղծութիւններից մէկում ազգաբարրում է ի լուր աշխարհին, թէ Ռուսաց իւրերի, նրա ողորմած թագուհու շնորհիւ ազատւում են հայ ժողովրդի զանգուածները ցաւից, անհանգստութիւնից.

Ռուսաց տէրն արթնացաւ,
 եւ վեհափառն մեծացաւ...
 Սէր կայսրուհւոյն բազմացաւ,
 Գլխով ինն առատացաւ...

28. Անդ:

Որում առցէ տէր զկեանս,
 Զի գլուխը մեր կացցեն անցաւ²⁹:

Հ. Մինաս Բժշկեանը Պետրոս Առաջինին պատկերում է իբրեւ հիւսիսից ճառագայթող մի աստղ, որ լուսաւորում է անծայրածիր Ռուսաստանը եւ անջինջ յիշատակ թողնում մարդկութեան սրտում.

Լայնածաւալ սիրտ վեհափառ քաջաց
 Արտադրիչ գործոց չնաշխարհիկ փառաց.
 Զաշխարհ զպետութիւն կարգեալ դերունակ,
 Կանգնեն պերճապէս զանմահ յիշատակ:

Պետրոս զիւցազնեայ առաքինին քաջ
 Ազանց բոլորից տարացոյց բարեաց.
 Գերահրաշ փայլիչ ազգին իւր Ռուսաց,
 Նոր աստղը ծագեաց հիւսիսականաց³⁰:

Հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամական կապերին, ազգային-ազատագրական շարժման մէջ նրանց զաւակների միատեղ պայքարի առանձին տրուագներին նուիրուած ներբողական բանաստեղծութիւնների մի շարք են կազմում Ստ. Խոջումեանցի, Ս. Պատկանեանի, Գ. Մելիքսեդեկեանի, Հ. Մ. Բժշկեանի եւ առաւել նոր շրջանի բանաստեղծ Թէոդորոս Շիրակացու գրական շրջանառութիւնից դուրս մնացած արեւրը.

Աւանիկ եկեալ հասեալ են.
 Ո՛հ, թէ գինչ թակաւաթիւ են,
 Ի թակարդ անկեալ որսիկ են.
 Թողէք, զի յառաջ եկեացեն.
 Անուն քո բարձր է, մեծ իշխան,
 Շահ կարծեալ զքեզ եւ ոչ Պան:

դրում է Ս. Պատկանեանը «Ի յաղթանակ Յիցիանովի» երգում³¹:

29. Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիզ 1912, էջ 376:

30. Հ. ՄԻՆԱՍ ԲԺՇԿԵԱՆ, Համառոտ մկարագիր վարուց երեւելի արամց, Վենետիկ 1850, էջ 712:

31. ՍԵՐՈՎԱԵ ՎՐԺ. Ի ՊԱՏԿԱՆԵԱՆ ԵՐԳԻ, Մոսկուա 1887, էջ 89: Սա Գանձակի հերոսական մարտերին նուիրուած պատմա-քնարական պոէմ է, հայ-ռուսական զինակցութեան շուրջը հիւսուած առաջին մարտաշունչ ատենադպրութիւնն՝ իր տեսակի մէջ: Զեռագրերում այս պոէմը ունի հետեւեալ ընդարձակ խորագիրը. «Երգ վրան աքանչելի յաղթութեան օգոստոսփառ կայսերն ամենայն ռուսաց, ամենահզօր կուսակալ Պաւել Դիմիտրիչ Յիցիանովին, որով էառ զամառնիկ ամբոցն իղիսաբէշտապօղիս քաղաքին, յօրինեալ ի խոնարհագոյն ծառայ տիրացու Սերովիչ Տէր Պետրոսեան Թիֆլիզու հայոց վարժապետ կոստանդնուպօլսեցւոյ» (Մատենադարան, ձեռ. քիւ 8216, թերթ 181բ):

Տիրողըն մեծ Ռուսաստանի
Տայ քեզ պատիւ ըստ պատշաճի,
Հանճարամիտ, դործով արի,
Համայն մարդկանց խորհրա բարի:
Ամենեցուն ես ցանկալի,
Ազնիւ տոհմիւ տամբ գովելի,
Յաւուր դարի քոյոյ մեծի,
Ազգդ քոյ ըզքեւ բարձր պարծի³⁶:

«Հայեաց եւ տես, ո՛վ զուարթդ մտօք եւ զօրացեալդ արադահաւ օգնականութեամբն երկնային, — գրում է Ստ. Խոջումեանցը —, թէ որքան մեծ է ի քեզդ աւանդեալ խորհուրդդ կառուցեալ դաստուած — ընկալն սուրբ Սիւն ի կողմանս հիւսիսոյ, զերեւոյթն փրկութեան մե-րոյ...»³⁷: Արձակ բանաստեղծութեան եղրափակիչ հատուածում Ստ. Խոջումեանցը ներբողում է նաեւ Եկատերինա Երկրորդին, հայերի պաշտպան այն թագուհուն, որ անձամբ ինքն է որոշում եկեղեցու շինութեան տեղը եւ կայսերական հրաման արձակում այդ առթիւ. «Օգոստոսափառ կայսերուհւոյ շնորհեալ տեղն սուրբ եկեղեցւոյ եւ սիրահրաւէր քարձու հրամանաւ նորին կառուցեալ»³⁸:

Սակաւաթիւ, բայց յոյժ ուշագրաւ են նաեւ ԺԼ. դարի հայ-ռուսական յարաբերութիւններն արձագանգող զեղարուեստական ար-ձակ էջերը: Դրանց կ'անդրադառնանք մի այլ առիթով:

Ինչպէս արդէն նկատեցինք, հայոց նոր եւ ընդհանուր զարթոնքը զեղարուեստական գրականութեան զարգացումը դնում է զաղափա-րական նոր ուղեգծի վրայ, գրականութիւնը կրում է առաջացող ազ-գային, քաղաքական նոր հոսանքների ազդեցութիւնը: ԺԼ. դարի

36. Ձեռ. Բիւ 6377, Թերթ 22բ: Խոջումեանցի «Բան զովասանութեան»ը համառօտ ձեւով տպագրուած է Վիւան հայոցում:

37. Նշ. ձեռ., Թերթ 10ա:

38. Մատենադարան, Երեւան, ձեռ. Բիւ 6377, Թերթ 22բ-23ա:

Ասացեալ զայս իմոյ բանի,
Տօնի սրբոյ կատարինի,
Որոյ անուամբն զեկեղեցի
Շինել ազնիւ Յովհաննիսի:
Ի դարուս երկրորդ կատարինի,
Կայսերուհւոյ հզօր մեծի,
Եւ ժառանգի նորին զահի,
Կայսերական մեծ իշխանի:
Ի Պետերբուրգ մեծ քաղաքի,
1782 թուական փրկի,
Քսան եւ ութ նոյեմբերի,
Աւարտ տառիս վերաբերի:

զեղարուեստական գրականութիւնը, իբրեւ վերանորոգող կամ անց-ման շրջանի յատուկ գրականութիւն, ունի որոշակիօրէն ընդգրծ-ուած կրօնա-ազգային լուսաւորական ուղղութիւն: Այն իր ար-ուեստի ու բովանդակութեան առանձնատկութիւններով շրջագծում է հայ նոր գրականութեան նախապատմութիւնը եւ ամուր հիմքեր ստեղծում նրա զարգացման համար: ԺԼ. դարի վերանորոգող զեղ-արուեստական գրականութեան համար առաջնահերթ եւ չլուծուած հարցը ոչ թէ աշխարհականացումն էր (տա սկսուել էր ԺԲ-ԺԳ դա-րերից եւ շարունակում էր քնականոն, վերլնթաց գծով), այլ՝ ազ-գայնացումը, գրականութեան մէջ կրօնա-ազգային ոգու, զաղափա-րական ուղղութեան, ազգային-ազատասիրական քնաւորութեան հաս-տատումն ու վերահաստատումը: Վերանորոգութեան, անցման այս շրջանն է նախագծում հայ նոր զեղարուեստական գրականութեան վերելքի ճանապարհը: Նոր գրականութեան յաղթանակը, ԺԹ. դարի երկրորդ քառորդում, պայմանաւորում է առկայ երեք հիմնական դործօնների՝ աշխարհաբար գրական լեզուի, աշխարհիկ բովանդա-կութեան եւ ազգային (արդէն ոչ կրօնա-ազգային) ժողովրդավար զաղափարախօսութեան միասնական զարգացմամբ:

Այսպիսի գրականութեան առաջնորդը եղաւ մեծ լուսաւորիչ Խա-չատուր Աբովեանն իր «Վէրք Հայաստանի» վէպով:

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ

Résumé

LE RENOUVEAU DE LA LITTÉRATURE ARTISTIQUE
ARMÉNIENNE ET L'IMAGE QU'ELLE REFLÈTE
DES RELATIONS ARMÉNO-RUSSES

SUSANIK NAZARIAN

L'A. reprend en cet article d'une manière synthétique et en les réélaborant, certains thèmes traités par elle dans une série d'articles précédents. Elle s'arrête d'abord sur la signification et les caractéristiques du renouveau littéraire arménien au XVIII^e siècle.

Ce renouveau se distingue d'abord par l'assimilation, de la part arménienne, de certains principes fondamentaux du classicisme européen. Cette approche du classicisme ne se limite pas aux aspects purement formels et comporte un vrai renouveau des contenus, ce qui se révèle surtout par le fait que les thèmes profanes s'introduisent désormais d'une façon irréversible dans la littérature.

Un aspect particulier de cette situation est représenté par le théâtre qui connaît, dans la deuxième moitié du XVII^e siècle, ces premières apparitions timides dans la réalité culturelle de la diaspora arménienne, et qui s'établit définitivement au cours du siècle suivant par l'activité des moines Mekhitaristes de St. Lazare à Venise.

La littérature, surtout la poésie scientifique et patriotique, constituent une autre dimension très importante et caractéristique de cette période.

Dans la deuxième partie de son article, l'A. examine en particulier les manifestations de sympathie de plusieurs écrivains et poètes de l'époque envers la politique caucasienne de la Russie, surtout de Pierre le Grand et de Catherine II, ainsi que les espérances suscitées par cette politique.

ՊԱՏՄԱԿԱՆ – HISTOIRE

ԹԵՈԴՈՐԱ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ
ԿԱՅՍՐՈՒՅԻ ԲԻԻԶԱՆԴԻՈՆԻ*

Երբ Բիւզանդիոնի կայսրը Թէոփիլոս ամուսնութեան տարիքին հասաւ, մայր կայսրուհին Եւփրոսինէ, ըստ լինելի առկորութեան՝, սրտեց կայսերական պալատը հաւաքել կայսրութեան գեղանի մանկամարդները, որպէսզի մասնաւոր հանդէսի մը՝ ընթացքին Թէոփիլոս կարենար ընտրել անոնց մէջէն իր ապագայ կողակիցը եւ կայսրուհին:

Այս հաւաքոյթին մասնակցելու համար պայման չէր անպատճառ ազնուական գերդաստանի մը աղջիկն ըլլալ: Բիւզանդացի կայսրերը յաճախ ամուսնացած են ժողովուրդի աղջիկներու հետ. կը բաւէր որ գեղեցիկ ըլլար:

Թէոփիլոս, այդ հանդէսի ընթացքին, պիտի շրջէր գեղուհիներու բազմութեան մէջէն, ձեռքը՝ ոսկիէ խնձոր մը բռնած, եւ որուն որ այդ խնձորը տար՝ ան պիտի ըլլար իր կինը եւ կայսրուհին:

Թէոփիլոս եկաւ, անցաւ գեղուհիներու առջեւէն, գիտեց իւրաքանչիւր թեկնածուն եւ կանգ առաւ գեղուհի Կատսիայի առջեւ: Ամէնքը կը խորհէին թէ ա՛յ ընտրութիւնը Եղած էր եւ կը ապաստին որ կայսրը ոսկիէ խնձորը յանձնէր ընտրեալին:

Բայց նախ քան ճակատադրական այդ արարքը, կայսրը՝ խօսքը Կատսիային ուղղելով՝ ըսաւ. Իրապէս, վատ բանը կնոջմէ առաջ կու գայ: Այդ ըսելով, կայսրը կ'ողէր ակնարկել Եւայի մեղանչանքին:

*) Այս ուսումնասիրութեան ընթացքը խմբագրութեան ուղարկած է՝ Հեղինակին մահէն վերջ՝ իր դուստրը: Չայն կը հրատարակենք՝ մեր կողմէ ինչ ինչ լեզուական վերահամեմտումով: Հասկնալի է որ, Հեղինակը կարելիութիւնը ունեցած չէ զայն վերամշակելու եւ վերատեսնելու մատենագրական ծանօթութիւնները (ԽՄԲ.):

1. Այս ձեւով էին ընտրուած՝ աթենացի ժրեմէ կայսրուհիի որդւոյն Կոստանդին Զ. Միլանաճինի կինը՝ հայազգի Մարիամ՝ 788ին, Նիկիայի Ա.ի որդւոյն Ստաւրակի կինը՝ Թէոփանոյ՝ 807ին, Միքայէլ Գ.ի կինը՝ Եւդոկիա՝ 855ին: